ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «20» 03 2026թ N 794-Ա

«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N 1217-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասով, 83-րդ հոդվածի 1-ին մասով, 84-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ, 24-րդ և 25-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշման 4-րդ կետի 15-րդ ենթակետի «բ» պարբերությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի N 1472-Ա որոշմամբ և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով.

հրամայում եմ.

1. Հաստատել «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերության՝

1) վարչակազմակերպական կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) հաստիքացուցակը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) 2026 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը և դրա կատարողականը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Թույլատրել «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին սույն հրամանի 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված N 3 հավելվածի ծախսերի նախահաշվում իրականացնել վերաբաշխում մինչև 10%-ի չափով:

3. «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ ընկերության աշխատակիցների խրախուսումն իրականացնել կանխատեսվող եկամուտների ապահովման դեպքում և այն համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի հետ:

4. Որակի ենթակառուցվածքի զարգացման վարչությանը և Լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանն ապահովել Հայաստանի Հանրապետության 2025 թվականի դեկտեմբերի 2-ի N 1910-Ն որոշման 4-րդ կետի 15-րդ ենթակետի բ. պարբերությամբ սահմանված պահանջների կատարումը սույն հրամանի հաստատումից հետո երկօրյա ժամկետում:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի ապրիլի 30-ի ««Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը, 2025 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը և դրա կատարողականը հաստատելու և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի հունվարի 31-ի N 401-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1217-Ա հրամանը:

6. Սույն հրամանի 1-ին կետի 3-րդ ենթակետի գործողությունը տարածվում է 2026 թվականի հունվարի 5-ից ծագած հարաբերությունների վրա:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված N 1
Էկոնոմիկայի նախարարի
« » « » 2026թ.
N -Ա հրամանի

ՎԱՐՉԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԲԸ

Տնօրեն

Տնօրենի տեղակալ	Տնօրենի տեղակալ	Տնօրենի տեղակալ	Որակի կառավարիչ	Խորհրդականներ
Ջերմային, ֆիզիկա-քիմիական չափումների լաբորատորիա	Ռադիոէլեկտրական չափումների լաբորատորիա	Լաբորատոր Փորձարկումների կենտրոն	Ստանդարտացման բաժին	Գլխավոր չափագետ
Զանգվածի, հարակից մեծությունների և անկյունագծային չափումների լաբորատորիա	Էլեկտրական հաշվիչների չափումների բաժին	Չափանմուշների ստեղծման և պահպանման գիտական բաժին	Գործերի կառավարման բաժին	Իրավախորհրդատու
Գազի և հեղուկների ծախսի, մեխանիկական մեծությունների չափումների լաբորատորիա	Գյումրու տարածքային բաժին	Կառավարման համակարգերի սերտիֆիկացման բաժին	Գնումները համակարգող մասնագետ	Ֆինանսական և Հաշվապահական հաշվառման բաժին
Իոնիզացիոն չափումների լաբորատորիա	Վանաձորի տարածքային բաժին	Արդյունաբերական չափագիտության կենտրոն	Անձնակազմի կառավարման բաժին	Քարտուղարություն
Տեսակի հաստատման և չափագիտական վկայագրման բաժին	Կապանի տարածքային բաժին	Արտադրանքի սերտիֆիկացման բաժին		Տնօրենի օգնական

ՀՀ Էկոնոմիկայի նախարարի
« » « » 2026թ.
N ___ - հրամանի
Հավելված N 2

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԲԸ

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաստատված հաստիք	Հաստիքի դրույքաչափը	Ընդամենը աշխատավարձի ֆոնդ
1	Տնօրեն	1	1,700,000	1,700,000
2	Տնօրենի տեղակալ	3	950,000	2,850,000
3	Որակի կառավարիչ	1	800,000	800,000
4	Գլխավոր հաշվապահ	1	800,000	800,000
5	Գլխավոր չափագետ	1	750,000	750,000
6	Լաբորատոր փորձարկումների կենտրոնի ղեկավար	1	750,000	750,000
7	Արդյունաբերական չափագիտության կենտրոնի ղեկավար	1	750,000	750,000
8	Բաժնի պետ	11	500,000	5,500,000
9	Չափանմուշների ստեղծման և պահպանման գիտական բաժնի պետ	1	500,000	500,000
10	Լաբորատորիայի վարիչ	5	500,000	2,500,000
11	Տնօրենի խորհրդական	2	415,000	830,000
12	Իրավախորհրդատու	1	400,000	400,000
13	Գնումները համակարգող մասնագետ	1	400,000	400,000
14	Ավագ հաշվապահ	1	400,000	400,000
15	Հաշվապահ	2	320,000	640,000
16	Տնտեսագետ	1	250,000	250,000
17	Հաշվետար	1	240,000	240,000
18	Տնօրենի օգնական	1	290,000	290,000
19	Առաջատար մասնագետ	31	290,000	8,990,000
20	Որակի կառավարման առաջատար մասնագետ	1	290,000	290,000
21	Չափանմուշների ստեղծման և պահպանման գիտական բաժնի փորձագետ	2	240,000	480,000
22	Փորձագետ	15	240,000	3,600,000
23	Մասնագետ	64	210,000	13,440,000
24	Ուղղության ղեկավար սննդի և ոչ պարենային	1	290,000	290,000
25	Ուղղության ղեկավար նավթամթերք	1	290,000	290,000
26	Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգող, համակարգչային ցանցի ադմինիստրատոր	1	290,000	290,000
27	Փականագործ-մասնագետ	1	290,000	290,000
28	Պահեստապետ	1	290,000	290,000
29	Գիտական պահապան	2	180,000	360,000
30	Էլեկտրատեխնիկ	1	180,000	180,000
31	Պահակային խմբի ղեկավար	1	150,000	150,000
32	Պահակ մարզային	5	140,000	700,000
33	Պահակ	2	150,000	300,000
34	Հավաքարար	9	150,000	1,350,000
35	Մեխանիկ	1	200,500	200,500
36	Վարորդ բեռնատար	2	300,000	600,000
37	Վարորդ	1	200,000	200,000
38	Բանվոր	3	150,000	450,000
	Ընդամենը	181		53,090,500

ՀՀ Էկոնոմիկայի նախարարի
« » « » 2026թ.
N -Ա հրամանի
Հավելված N 3

«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
2026 Թ. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**Գումար (հազ. ՀՀ դրամ)**
N	**Աշխատանքի, ծառայության անվանումը**	**2026թ**
	Բյուջետային ֆինանսավորմամբ եկամուտներ	
1	Ստանդարտացման պետական պատվեր	13,558.5
2	Գիտական և գիտատեխնիկական ենթակառուցվածքների պահպանում	37,400.0
	Ընդամենը բյուջետային եկամուտներ	50,958.5
	Այլ եկամուտներ	
1	Ստուգաչափում,պետական փորձարկումներ	800,000.0
2	Համապատասխանության հավաստման ծառայություններ	50,000.0
3	Պարենային և ոչ պարենային ապրանքների լաբորատոր փորձարկում	235,000.0
4	Ծառայությունների սերտիֆիկացում	4,000.0
5	Կառավարման համակարգերի սերտիֆիկացում	70,000.0
6	Ստանդարտների վաճառք	5,000.0
7	Ստանդարտների մշակում	5,000.0
8	ԿՍ հաշվառում և փորձաքննություն	8,000.0
9	Այլ եկամուտներ	25,000.0
	Ընդամենը այլ եկամուտներ	1,202,000.0
	Ընդամենը եկամուտներ	1,252,958.5

	ԾԱԽՍԵՐ	**Գումար (հազ. ՀՀ դրամ)**
N	**Ծախսերի տեսակը**	**2026թ**
	Բյուջետային ծախսեր	
1	Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ (ստանդարտացման պետական պատվեր ծրագրի)	11,298.75
2	Ստանդարտացման պետական պատվեր ծրագրի հարկ (ԱԱՀ)	2,259.75
	Ընդամենը	13,558.5
1	Աշխատավարձ՝ ենթակառուցվածքների պահպանում, աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	32,871.5
2	էլեկտրաէներգիա, գազ, կոմունալ ծախսեր՝ենթակառուցվածքների գծով	1,832.4
3	Գույքահարկ՝ Արագածի գիտական կենտրոն	2,696.1
	Ընդամենը	37,400.0
	Ընդամենը բյուջետային ծախսեր	50,958.5
	Այլ ծախսեր	
1	Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	902,000.0
1.1	այդ թվում աշխատավարձ	622,000.0
1.2	Խրախուսում	280,000.0
2	Տնտեսական, գրենական, լաբորատոր նյութեր և ապրանքներ	27,000.0
3	Ներկայացուցչական ծախսեր	3,000.0
4	Տրանսպորտի պահպանման ծախսեր, վառելիք	27,000.0
5	Կապ, ինտերնետ, փոստային ծախսեր	4,000.0
6	Էլեկտրաէներգիա, գազ, կոմունալ ծախսեր	29,000.0
7	Վարձավճարներ	1,500.0
8	Գործուղման ծախսեր	51,000.0
8.1	Գործուղման ծախսեր հանրապետության ներսում՝ հայտատուների հաշվին	40,000.0
8.2	Արտերկրյա գործուղումներ	11,000.0
9	Ընթացիկ վերանորոգում	4,000.0
10	Մաշվածություն	35,000.0
11	Պետական պահպանության ծառայություն	6,840.0
12	Այլ կազմակերպություններից և ֆիզ. անձանցից ձեռք բերվող ծառայություններ	25,000.0
13	Արտաքին տրամաչափարկումներ և միջլաբորատոր համեմատություններ	40,000.0
14	Այլ ծախսեր	24,000.0
	Ընդամենը այլ ծախսեր	1,179,340.0
	Ընդամենը ծախսեր	1,230,298.5

22,660.0

* Գործադիր տնօրենին վերապահել բյուջեի վերաբաշխման իրավասություն, հաստատված բյուջեի մինչև 10%-ի չափով
* Սույն բյուջեի գործունեությունը կարող է երկարաձգվել, և ուժի մեջ է մինչև հաջորդ տարվա բյուջեի հաստատումը